Արձանագրություն N 1
ԵԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-26/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնանշման հարցմամբ
Հանձնաժողովի առաջին նիստի

ք. Երևան 05.հունիսի 2026թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Քեխյան
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Կարապետյան, Լ. Գլչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Գևորգյան

1. *Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին*
*Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Քեխյան*

ա. Հաստատել գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստը.

բ. Հաստատել գնահատող հանձնաժողովի հաորդ նիստի անցկացման օրը և ժամը:

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգ>> - ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված:*

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:*

*ա) Գնման ընթացակարգի հրավերի(ծանուցման) տեքստը հաստատելու մասին*
*Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Քեխյան*

Կարգի 26-րդ կետի 4-րդ ենթակետի և 31-րդ կետի պահանջներին համապատասխան ու հիմք ընդունելով 2026թ. հունիսի 2 -ին Պատասխանատու ստորաբաժանման կողմից հաստատված «Ապրանքներ»-ի գնման գործընթացին վերաբերվող գնման հայտը գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի հատարարության և հրավերի տեքստերը, որոնք վերցված են տեղեկագրում հրապարակված օրինակելի ձևից: Գնման ընթացակարգի հատարարության և հրավերի օրինակելի ձևերում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որոնք չեն հակասում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:*

*բ) Հանձնաժողովի հաջորդ նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին*

Կարգի 26-րդ կետի 4-րդ ենթակետի և 31-րդ կետի պահանջներին համապատասխան գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հայտերի բացման նիստի օրը և ժամին: Հայտերի բացումը և հաջորդող գնահատումն իրականացվելու է թղթային եղանակով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:*

Գնահատող հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ | | Ի. Քեխյան |
| Անդամներ | | Մ. Կարապետյան |
| | | Լ.Գլչյան |
| Քարտուղար | | Հ. Գևորգյան |